



Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ

2010-2014թթ.

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

[2010]



ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՄԱԻ) ստանդարտացման ազգային մարմնի (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն) ենթակայության կազմակերպություն է, որն իր լիազորության սահմաններում իրականացնում է պետական քաղաքականություն ստանդարտացման բնագավառում: ՄԱԻ լիազորությունն է խթանել Հայաստանում արդյունավետ և նպատակային կամավոր ստանդարտացումը:

Առաքելություն: Առաջնորդել և խթանել ազգային և միջազգային ստանդարտների մշակումը և կիրառումը, ինչպես նաև համապատասխանության գնահատման որակյալ ծառայությունների մատուցումը՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրության ու ծառայությունների մրցունակության և քաղաքացիների բարեկեցության բարձրացման նպատակով:

Տեսլական: Ազգային ստանդարտների համակարգի առաջնորդման միջոցով բարելավել Հայաստանի քաղաքացիների կյանքի որակը:

Առավել պարզ ձևով *ստանդարտը* սահմանվում է որպես համաձայնեցված չափորոշիչների կամ կանոնների ամբողջություն, որոնց նկատմամբ առարկաները չափվում կամ համեմատվում են: Չնայած հաճախ նշվում է, որ «ստանդարտները կամավոր են», սակայն շատ ստանդարտներ հղվում են իրավական ակտերում, դարձնելով դրանք պարտադիր բնույթի:

Համապատասխանության գնահատումը ստանդարտին համապատասխանության ստուգման հետ կապված ցանկացած գործունեությունն է: Այն ներառում է հավատարմագրումը և հավատարմագրված գործունեության տեսակները, ինչպիսիք են փորձաքննությունը և համապատասխանության հավաստումը (սերտիֆիկացումը):

Ստանդարտացումը վերաբերվում է ինչպես ստանդարտների մշակման, այնպես էլ համապատասխանության գնահատման գործունեության տեսակներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՄԱԻ) խթանում է ստանդարտների կիրառումը, համապատասխանության գնահատումը և ստանդարտացումը ազգային և միջազգային մակարդակներով:

Կապվե՛ք մեզ հետ

Էլ-փոստ. sarm@sarm.am

Հասցե՝ 0051 Երևան, Կոմիտաս 49/2

հեռ. +374 10 237020

ֆաքս. +374 10 285620

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ	2
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	3
ԱՄՓՈՓԱԳԻՐ	4
I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
1.1 Ներածություն	5
1.2 Կազմակերպության կառավարումը և կառուցվածքը.....	8
1.3 Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը	16
1.4 Կազմակերպության նպատակները և խնդիրները.....	16
1.5 Կազմակերպության գործունեության ոլորտը	17
1.6 Ապրաքների եվ ծառայությունների բնութագրությունը.....	18
1.7 Կազմակերպության ֆինանսատնտեսական ցուցանիշները	20
II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ	21
2.1 Կազմակերպության գործունեության ընդլայնման հեռանկարները	21
2.2 Կազմակերպության գործունեության զարգացման անհրաժեշտ միջոցառումները.....	23
2.2.1 Ռիսկերի գնահատումը և մեղմացման միջոցառումները.....	27
2.2.2 Ծրագրի ֆինանսական վերլուծությունը	29
2.3. Զարգացման ծրագրի արդյունքում ակնկալվող արդյունքը.....	29

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ստանդարտների ազգային ինստիտուտը փակ բաժնետիրական ընկերություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության համակարգում:

Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (ՀՍ), միջպետական (ԳՕՍՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների նախապատրաստումը և ընդունումը, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտա-մեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կոորդինացնում է ՀՀ տարածքում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՍ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվության ապահովման աշխատանքների ավտոմատացման նպատակով ՀՀ-ում գործող 1993 թ. հետո ստանդարտների մատենագիտական տվյալների հիման վրա ստեղծվել և ներդրվել է տեղեկատվական որոնման էլեկտրոնային համակարգ “SARM”, որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին և անհատներին փնտրել և ձեռք բերել իրենց գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթեր:

Գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման միջազգային համագործակցությունը: 1997թ-ից ինստիտուտը ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) անդամ է: Ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի 14 տեխնիկական հանձնաժողովների և 19 ենթահանձնաժողովների աշխատանքներին:

2007 թվականի հունվարի 1-ից ինստիտուտը նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի (CEN) գործընկեր անդամ է: 2008 թվականի հունվարի 1-ից միացող անդամ է և մասնակցում է կոմիտեի թվով 3 հանձնաժողովների աշխատանքներին:

Ինստիտուտը մասնակցում է ԱՊՀ շրջանակներում գործող ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի աշխատանքներին:

Ինստիտուտը հավատարմագրված է որպես արտադրանքի, ծառայությունների, որակի և Էկոլոգիական կառավարման համակարգերի (ԻՍՕ 9000 և ԻՍՕ 14000) սերտիֆիկացման մարմին: Իրականացնում է նշված ոլորտների համապատասխանության հավաստման աշխատանքներ, ինչպես նաև լայն անվանացանկի արտադրատեսակների փորձարկումներ:

Ընկերության ուսումնա-մեթոդական կենտրոնում կազմակերպվում է հանրապետության ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման ոլորտների աշխատողների ուսուցում և վերապատրաստում:

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, “Բաժնետիրական ընկերությունների մասին”, “Ստանդարտացման մասին” և “Համապատասխանության գնահատման մասին” ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, համաձայն ՀՀ կառավարության 25.09.2003թ. N1180-Ա, 21.08.2008թ. թիվ N936-Ն որոշումների, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 08.10.2003թ. N132 և ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 11.05.2009թ. N296-Ա հրամաններով՝ “ԵՐԵՎԱՆ-ԹԵՍԹ” փակ բաժնետիրական ընկերության և “ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ” փակ բաժնետիրական ընկերության միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով, ինչպես նաև “ՎԱՆԱԶՈՐ-ԹԵՍՏ”, “ԿԱՊԱՆ-ԹԵՍՏ”, “ԳՅՈՒՄՐԻ-ԹԵՍՏ” և “ՕԿՏԱՆ-ԹԵՍՏ” փակ բաժնետիրական ընկերությունները “ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ” փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպման ճանապարհով, և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

Ընկերության գրանցման վկայականի համարն է 03Ա061115:

Ընկերության գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի պող. հ. 49/2:

Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներում նշված անշարժ գույքի, այդ թվում հողամասի մակերեսը, ընդամենը՝

1. շենքեր՝ 5448.97 քառ. մետր,
2. շինություններ՝ 1027.49 քառ. մետր,
3. հողամաս՝ 1.077295 հա:

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը 28080000 (քսանութ միլիոն ութսուն հազար) դրամ է, որը կազմում է 2808 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10000 ՀՀ դրամ: Ընկերությունում պետական մասնակցությունը կազմում է 100 տոկոս: Բոլոր 2808 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:



Ընկերության սեփական կապիտալը/զուտ ակտիվների արժեքը/ ըստ Ծրարի ընդունման տարեկազմի հաշվեկշռի հավասար է 302364 հազ. դրամ, որի հարաբերությունը կանոնադրական կապիտալին կազմում է 10,8 գործակից:

Ընկերության արտադրական հզորությունները, հազ. դրամով.

1. Շենքեր	88657
2. Մեքենաներ սարքավորումներ	228715
3. Տրանսպորտային միջոցներ	19383
4. Այլ	51085

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” փակ բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” փակ բաժնետիրական ընկերությունը, որպես սեփականություն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր իրավասության սահմաններում կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու կրել պարտականություններ, ինչպես նաև հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը և “Ստանդարտացման մասին” ՀՀ օրենքով սահմանված իր իրավասությունների սահմաններում գործառույթների իրականացումը: Հայաստանի ստանդարտացման համակարգը սահմանում և առաջնորդում է Հայաստանի քաղաքացիների անվտանգության և տնտեսական բարեկեցության ապահովման ուղիները համաշխարհային տնտեսության շրջանակներում:

Ստանդարտների ազգային ինստիտուտի 2010-2014թթ. ռազմավարական նպատակներն են՝

- Խթանել հայկական ապրանքատեսակների առևտուրը միջազգային շուկաներում,
- Երաշխավորել ազգային ստանդարտների շարունակական բարելավումը և համապատասխանեցումը փոփոխվող պահանջներին,



- Բարձրացնել ազգային ստանդարտների ընկալումը, ճանաչումը և կիրառումը,
- Բացահայտել և լուծումներ առաջարկել այն ազգային խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են կարգավորվել ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի միջոցով:


Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ISO միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի և CEN եվրոպական ստանդարտացման կազմակերպությունում միացող (affiliate) անդամ կարգավիճակով:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմնի ստորաբաժանում, համագործակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների հետ Ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՄՉՍ ՄՊԽ) աշխատանքների շրջանակներում:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որը միջազգային նպատակներից էլնելով օգտագործում է “SARM” հապավումը, այն է՝ Հայաստանի ստանդարտներ, իր մեջ ներառում է գործունեության հետևյալ հիմնական ծառայությունները.

- Ստանդարտացման, այդ թվում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարման ծառայությունները,
- Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման), այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայությունները,
- Պարենային և ոչ ապրենային ապրանքների, այդ թվում՝ նավթամթերքի և ռադիոէլեկտրական սարքավորումների փորձարկումները (լաբորատորիաներ),
- Ուսումնական կենտրոնը:

Բոլոր ծառայությունները ղեկավարվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ ՍԱԻ-ի տնօրենի համակարգման ու ղեկավարման ներքո: Բոլոր ուղղություններով գործունեության պատասխանատվությունը կրում է ՍԱԻ տնօրենը:





1.2 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նրա լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը, լիազոր ներկայացուցիչների խորհուրդը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, որպես Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ միակ բաժնետեր, հաստատում է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության

1. կանոնադրությունը,
2. տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշիվը,
3. տարեկան գործունեության մասին հաշվետվությունը.

Որպես ընկերության բաժնետոմսերի սեփականատեր ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն իրավունք ունի.

- մասնակցել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել ընկերության կառավարմանը,
- տեղեկատվություն ստանալ ընկերության գործունեության մասին, ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին և այլ փաստաթղթերին,
- ստանալ շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,



- հայցով դիմել դատարան, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված, գործող օրենքներին և այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը հակասող որոշումների գանգատարկման նպատակով,
- ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- գործող օրենսդրությամբ սահմանված կարգով գրավ դնել ընկերության գույքում իր բաժնեմասի իրավունքը,

ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում լուծել ընկերության գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Ընկերության բաժնետերը պարտավոր է՝

- չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ,
- իր գործողություններով չխոչնդոտել ընկերության նորմալ գործընթացին,
- ժամանակին կատարել ընկերության նկատմամբ վերցրած պարտավորությունները,
- ընկերության գույքում իր բաժնեմասի իրավունքը գրավ դնելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել ընկերությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, որը “Ստանդարտացման մասին” ՀՀ օրենքի, “Համապատասխանության գնահատման մասին” ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 22.07.2004թ. N1038-Ն որոշման համաձայն Ստանդարտացման ազգային մարմինն է և Համապատասխանության գնահատման ազգային մարմինն է, իրավասու է իրականացնել Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության գործունեությանը և կառավարմանն առնչվող հետևյալ գործողությունները.

1. մշակում և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է պետական քաղաքականությունը ստանդարտացման բնագավառում.
2. համապատասխան շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա նախապատրաստում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագիրը, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի մշակման ծրագիրը.
3. հաստատում և գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները.



4. ընդունում է դասակարգիչները, բացառությամբ սոցիալ-տնտեսական ոլորտի դասակարգիչների.
5. իրականացնում է տեխնիկական կանոնակարգերի նախագծերի ծանուցումը.
6. համակարգում է Ստանդարտների ազգային ինստիտուտի գործունեությունն իրեն վերապահված իրավասությունների սահմաններում.
7. իրականացնում է պետական քաղաքականություն համապատասխանության գնահատման բնագավառում.
8. իրականացնում է արտադրանքի կամ ծառայության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն.
9. օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է համաձայնագրեր համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչման մասին.
10. ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը համապատասխանության գնահատման բնագավառում՝ այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում.
11. հրապարակում է տեղեկատվություն սերտիֆիկացման մարմինների, փորձարկման լաբորատորիաների և Հայաստանի Հանրապետությունում կիրառվող համապատասխանության նշանների վերաբերյալ, այն տրամադրում է միջազգային և տարածաշրջանային համապատասխանության հավաստման կազմակերպություններին.
12. ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը և հավատարմագրման խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտն ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնելու, վերականգնելու կամ դադարեցնելու վերաբերյալ.
13. սույն օրենքով սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է սերտիֆիկացման մարմնի կամ փորձարկման լաբորատորիայի պարբերական գնահատում, որի արդյունքները ներկայացնում է հավատարմագրման խորհուրդ.
14. բացառիկ դեպքերում, երբ համապատասխանության հավաստման անհրաժեշտության պայմաններում բացակայում են համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում համապատասխան սերտիֆիկացման մարմինները կամ փորձարկման լաբորատորիաները, առաջարկություն է ներկայացնում հավատարմագրման խորհուրդ՝ որոշակի սերտիֆիկացման մարմնին կամ



փորձարկում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում և ժամկետով համապատասխանության հավաստման աշխատանքներ իրականացնելու լիազորության վերաբերյալ.

15. վարում է հավատարմագրված անձանց գրանցամատյանը.
16. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ ընկերության տնօրենը:

Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

Տնօրենը ընկերության շահերը ներկայացնում է երրորդ անձանց, դատարանների և այլ պաշտոնական կազմակերպությունների առջև:


Ընկերության տնօրենը՝

1. տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում ընկերության անունից.
2. ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. գործում է առանց լիազորագրերի.
4. տալիս է լիազորագրեր.
5. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6. բանկերում բացում է ընկերության հաշվարկային, այդ թվում՝ տարադրամային հաշիվներ.
7. նախապատրաստում է ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը և անցկացումը.
8. ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային կանոնակարգը, վարչակազմակերպական կառուցվածքը.



9. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
10. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է ընկերության աշխատակիցներին.
11. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցառումներ:

Ներկայումս Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.



Գծանկար 1. Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության կառուցվածքը

Կազմակերպության նպատակներն ու խնդիրները իրագործելու համար լիազորությունները ըստ հորիզոնական /արտադրական ստորաբաժանումներ/ և ուղղահայաց /կառավարման աստիճանակարգեր/ կազմակերպական կառուցվածքների բաշխումը ներկայացված է ստորև բերված աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1.

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կառուցվածքային ստորաբաժանումները և դրանց լիազորությունները.

Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	Հիմնական գործառույթները և անհրաժեշտության հիմնավորումը
1.	Ընկերության վարչական ապարատ	Կազմակերպում, կոորդինացում, ուղղորդում, վերահսկում և ղեկավարում է աշխատանքները ընկերությունում և նրանից դուրս
2.	Հաշվապահություն	Կատարում է ընկերության հաշվապահական հաշվառման, ֆինանսական կառավարման և հսկման աշխատանքները
3.	Ստանդարտացման բաժին	Կազմակերպում է “Ստանդարտացման մասին” ՀՀ օրենքով ամրագրված ստանդարտացման գործառույթներ և ստանդարտացման ոլորտում միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և ապահովման աշխատանքներ
4.	Սննդամթերքի և պարենային հումքի սերտիֆիկացման բաժին	Սննդամթերքի և պարենային հումքի համապատասխանության հավաստման և համապատասխանության հսկողության աշխատանքներ
5.	Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սերտիֆիկացման բաժին	Ոչ պարենային ապրանքների և հանրային սննդի համապատասխանության հավաստման և համապատասխանության հսկողության աշխատանքներ
6.	Կառավարման համակարգերի սերտիֆիկացման բաժին	Կառավարման համակարգերի սերտիֆիկացման և համապատասխանության հսկողության աշխատանքներ
7.	Սերտիֆիկատների ձևակերպման և գրանցման սպասարկում	Սերտիֆիկատների ձևակերպում, գրանցում, հաշվառում
8.	Լաբորատոր փորձարկումների կենտրոն	Պարենային և ոչ պարենային ապրանքների լաբորատոր փորձարկումներ
9.	Գյումրու տարածքային բաժին	Կատարում է պարենային և ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման աշխատանքներ
10.	Վանաձորի տարածքային բաժին	Կատարում է պարենային և ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման աշխատանքներ
11.	Կապանի տարածքային բաժին	Կատարում է պարենային և ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման աշխատանքներ
12.	Ուսումնական կենտրոն	Իրականացնում է ստանդարտացման, չափազիտության, համապատասխանության գնահատման ոլորտների մասնագետների, փորձագետների և աուդիտորների վերապատրաստում և ուսուցում
13.	Քարտուղարություն	Ընդհանուր գործավարության կազմակերպում, Կադրային աշխատանքների կատարում, գաղտնի փաստաթղթաշրջանառություն, ընկերության սերտիֆիկացման մարմինների և լաբորատորիաների հավատարմագրման փաստաթղթերի նախապատրաստում.
14.	Վարչատնտեսական կառավարման բաժին	Շենքի պահպանման, վերանորոգման, շահագործման և մատակարարման աշխատանքներ



15.	Համակարգչային սպասարկում	Համակարգչային ցանցի սպասարկում, համակարգչային ծրագրերի գծով տեխնիկական օժանդակություն, տվյալների բազաների ստեղծում և վարում, համակարգչային տեխնիկայի տեխնիկական խափանումների վերացում
-----	--------------------------	---

Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսները և կառավարման մարմիններում ընդգրկված անձանց փոխհատուցման ամսական գումարները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2.

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ հաստիքակազմը.

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորների թվաքանակը	Ամսական դրույքաչափ (հազար դրամ)	Ընդամենը (հազար դրամ)
1	Տնօրեն	1	450.0	450.0
2	Փոխտնօրեն	1	300.0	300.0
3	Աշխատակազմի ղեկավար – գլխավոր ֆինանսիստ	1	300.0	300.0
4	Խորհրդական	2	150.0	300.0
5	Տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգող ծառայության պետ	1	300.0	300.0
6	Տնօրենի օգնական	1	150.0	150.0
7	Գլխավոր հաշվապահ	1	300.0	300.0
8	Բաժնի պետ	7	180.0	1260.0
9	Տարածքային ստորաբաժանման ղեկավար	3	110.0	330.0
10	Լաբորատոր փորձարկումների կենտրոնի ղեկավար	1	180.0	180.0
11	Գլխավոր մասնագետ	19	110.0	2090.0
12	Առաջատար մասնագետ	58	90.0	5220.0
13	Առաջին կարգի մասնագետ	19	70.0	1330.0
14	Պարենտ-պահեստապետ	1	90.0	90.0
15	Վարորդ	3	90.0	270.0
16	Փականագործ	1	50.0	50.0
17	Բանվոր	1	50.0	50.0
18	Հավաքարար	5	50.0	250.0
19	Պատճենահանող	1	50.0	50.0
20	Տպագրիչ	1	50.0	50.0
21	Պահակ	5	50.0	250.0
22	Ծառայություններ մատուցող պայմանագրային աշխատող	19		
	Ընդամենը	133		13570.0



1.3 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով, “Ստանդարտացման մասին” և “Համապատասխանության գնահատման մասին” ՀՀ օրենքներով, “Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.4 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

2007թ. մայիսից Ստանդարտների ազգային ինստիտուտում ԻՍՕ 9001 ստանդարտի պահանջներին համապատասխան ներ է դրվել որակի կառավարման համակարգ, որը սերտիֆիկացվել է միջազգային համրավ ունեցող “SGS United Kingdom Ltd. Systems and Services Certification” բրիտանական սերտիֆիկացման մարմնի կողմից: Համաձայն Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության որակի քաղաքականությանը Ընկերության գործունեության նպատակն է իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից արտադրվող արտադրանքին և մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության ապահովումը, մարդու կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման աջակցումը:

Ընկերության հիմնական խնդիրներն են.

Ստանդարտացման բնագավառում մատուցվող ծառայությունների ուղղությամբ՝

արտադրանք արտադրող և ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև փոխհամաձայնության ապահովումը ստանդարտների նախագծերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացներում, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության ապահովումը:

Համապատասխանության հավաստման բնագավառում մատուցվող ծառայությունների ուղղությամբ՝



մարդու կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության ապահովմանն աջակցումը, արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և նրանց թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխումը, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանն աջակցումը, ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի տեխնիկական խոչընդոտների վերացումը, ինչպես նաև միջազգային տնտեսական, գիտատեխնիկական համագործակցության և միջազգային առևտրին մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Ընկերության գործառույթների կայունությունն ապահովվում է՝

ընկերության բոլոր ստորաբաժանումների և աշխատակիցների փոխհարաբերությունների կատարելագործմամբ և յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվության բարձրացմամբ, միջազգային գործելակերպին համապատասխան ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում աշխատակիցների բազմակողմանի ուսուցմամբ:

Ընկերության խնդիրների իրականացման ուղղություններն են.

սպառողի պահանջումների և սպասելիքների ուսումնասիրումը, որակի կառավարման համակարգերի արդյունավետության շարունակական բարելավումը, ծառայությունների մատուցման ժամանակակից մեթոդների տիրապետումը, մատուցվող ծառայությունների ժամանակահատվածի օպտիմալացումը, գործընկերների հետ վստահելի փոխհարաբերությունների հաստատումը:

Ընկերության բարձրաստիճան ղեկավարությունը պատասխանատվություն է կրում որակի քաղաքականության իրականացման համար և երաշխիքներ է տալիս ապահովելու տվյալ հայեցակարգի իրականացումը բոլոր մակարդակներում և դրա պահպանումն ընկերության ողջ անձնակազմի կողմից:

1.5 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության գործունեության ոլորտներն են.

1. Ստանդարտացում,
2. Պարոնային և ոչ պարենային ապրանքների, կառավարման համակարգերի և ծառայությունների համապատասխանության հավաստում,
3. Լաբորատոր փորձաքննություններ,
4. Համապատասխանության գնահատման ոլորտի փորձագետների որակավորում և մասնագետների ուսուցում:



1.6 ԱՊՐԱՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության “Ստանդարտների ազգային ինստիտուտ” փակ բաժնետիրական ընկերությունը “Ստանդարտացման մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և “Համապատասխանության գնահատման մասին” ՀՀ օրենքի 13 և 14 հոդվածների համաձայն, իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է գործունեության հետևյալ հիմնական տեսակները՝

- ընդունում է ազգային ստանդարտները.
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը.
- կազմակերպում է միջազգային, միջպետական, ազգային ստանդարտների նախագծերի փորձաքննությունը.
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպություններում.
- մասնակցում է միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքներին.
- հրատարակում է ազգային ստանդարտները.
- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և համակարգում է նրանց գործունեությունը.
- ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը.
- իրականացնում է ազգային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և հանձնարարականների, ինչպես նաև դասակարգիչների, տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը).
- իրականացնում է ազգային և միջազգային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և հանձնարարականների, ինչպես նաև դասակարգիչների վաճառքը.
- կազմակերպում է ստանդարտացման բնագավառում կադրերի մասնագիտացում և վերապատրաստում, համապատասխանության գնահատման բնագավառում՝ մասնագետների համապատասխան ուսուցում և որպես փորձագետներ որակավորում,



դրանց արդյունքների հիման վրա նշված բնագավառներում շնորհում է համապատասխան վկայագրեր.

- իրականացնում է տեխնիկական կանոնակարգերի տեղեկատվության ապահովման համար և դրանց պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկերի, ինչպես նաև ընդունված տեխնիկական կանոնակարգերի ու ՀՀ կառավարության որոշումների համաձայն համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների ու ծառայությունների վերաբերյալ պարբերական տեղեկագրքերի հրատարակումը.
- իրականացնում է ստանդարտների (ազգային, Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջազգային, միջպետական) տպագրական հրատարակման և դրանց տեղեկատվական համակարգերում ընդհանուր օգտագործման էլեկտրոնաթվային ձևով վարման աշխատանքները.
- իրականացնում է արտադրանքի, ծառայությունների, որակի, բնապահպանական (էկոլոգիական) և սննդի անվտանգության կառավարման համակարգերի համապատասխանության պարտադիր և կամավոր հավաստման աշխատանքները.
- կատարում է պետական մարմինների, սերտիֆիկացման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատվերներով արտադրանքի լաբորատոր փորձարկումներ.
- իրականացնում է ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում խորհրդատվական աշխատանքներ.
- իրականացնում է ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում տեղեկատվական գրքույկների, տեղեկագրերի, ձեռնարկների, կատալոգների, մասնագիտական այլ գրքերի և տեղեկագրքերի նախապատրաստումը և հրատարակումը.
- իրականացնում է ստանդարտացման և համապատասխանության հավաստման, այդ թվում՝ փորձարկումների հետազոտական աշխատանքներ.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վերահսկող ապրանքների մասնագիտական փորձաքննություն:

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ տարածքում արտադրանքների արտադրությամբ, աշխատանքների կատարմամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, հասարակական կազմակերպությունները, գիտահետազոտական կազմակերպությունները, ինչպես նաև սպառողները:



Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության լիազորությանը վերապահված ծառայությունները ֆինանսավորվում են “Ստանդարտացման մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն և “Հայաստանի Հանրապետության ամենամյա բյուջեի մասին” ՀՀ օրենքի 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի “03. Ստանդարտների մշակման ծառայություններ. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն” հոդվածով և ՀՀ-ում “Տեխնիկական կանոնակարգերի մշակման և ստանդարտացման աշխատանքների կատարման ամենամյա պետական պատվեր հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշմամբ:

1.7 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում

**Աղյուսակ 1.
Ֆինանսատնտեսական ցուցանիշներ**

Տարի	Բացարձակ իրացվելիության գործակից	Վճարունակության գործակից	Ընդհանուր իրացվելիության գործակից	Ֆինանսական անկախության գործակից	Ակտիվների շահութաբերություն, %	Սեփական կապիտալի շահութաբերություն, %	Ծախսերի գործակից
2007թ.	1.29	1.54	1.71	0.84	20.0	22.4	0.12
2008թ.	2.73	32.1	3.37	0.44	10.39	17.26	0.10
2009թ.	2.17	4.96	6.0	0.59	0.65	0.99	0.08

Աղյուսակ 2-ում ներկայացված են “Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության զուտ շահույթի բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը վերջին 3 տարիների կտրվածքով.

Աղյուսակ 2.


	2007թ.		2008թ.		2009թ.		Միջինը, %
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%	հազ. դրամ	%	
հաշվետու տարվա արդյունքներով զուտ շահույթ/վնաս	48547	100	42761	100	8911	100	100
այդ թվում՝							
չբաշխված շահույթ/վնաս	34654	71.4	30676	71.7	2983	33.5	68.2
պետական բյուջե փոխանցված շահաբաժին	8223	16.9	7767	18.2	2323	26.1	18.3
Ընդամենը	26431		22909		660		

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ


“Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության ունենալով ստանդարտացման և համապատասխանության հավաստման բնագավառում հարուստ փորձ և բարի ավանդույթներ (թվարկել դրանք), Հայաստանի Հանրապետությունում եզակի է իր բնույթով և հեռանկարում ստանդարտացման ասպարեզում մրցակիցներ ունենալ չի կարող: Այդուհանդերձ, ընկերությունը ներկայումս գտնվում է լիովին մրցակցային պայմաններում համապատասխանության հավաստման ծառայությունների մատուցման ոլորտում, ինչը ապագայում էլ ավելի մեծ զարգացում կունենա: Մասնավորապես, սկսած 2004թ.-ից ստեղծվեցին մասնավոր սերտիֆիկացման մարմիններ, որոնք հազեցված են համապատասխան լաբորատորիաներով:

2009թ. ընթացքում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՄՄ նկատմամբ:



Հետաքրքրություն է ներկայացնում նաև համապատասխանության հավաստման բոլոր աշխատանքների գծով առկա պատկերը և դրա փոփոխությունը վերջին երեք տարիների

ընթացքում: Գծանկար 2-ում ներկայացված է հանրապետության բոլոր սերտիֆիկացման մարմինների կողմից կատարված համապատասխանության հավաստման բոլոր տեսակների աշխատանքների թվաքանակի դինամիկան 2007-2009թթ. համար, իսկ գծանկար 3-ում պատկերված է Հայաստանում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից 2009թ. իրականացված համապատասխանության հավաստման բոլոր տեսակի աշխատանքների (սերտիֆիկատ, հայտարարագիր, մաքսային օրինակ և այլն) տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում:



Գծանկար 3.

Հայաստանում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից 2009թ. իրականացված գործունեության տեսակարար կշիռն ընդհանուր համապատասխանության հավաստման աշխատանքների ծավալում

Ինչպես երևում է գծանկար 3-ից, թեև ընդհանուր առմամբ համապատասխանության հավաստման ոլորտում 2009թ.-ին հավատարմագրված են եղել և գործունեություն են իրականացրել 17 ընկերություններ, այդուհանդերձ ոլորտի գերակշիռ մասը՝ 67% բաժին է ընկնում Ստանդարտների ազգային ինստիտուտին: Մյուս խոշոր ընկերությունը 21% մասնաբաժնով “Մավաս Գրուպ” ՍՊԸ-ն է: Մնացած բոլոր ընկերություններին բաժին է ընկել ոլորտի 12%-ը:



2.2 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մույն զարգացման ծրագրի շրջանակներում առաջիկա հինգ տարում “Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերության ռազմավարությունն ուղղված կլինի հետևյալ կարևորագույն խնդիրների կանոնակարգմանը.

1. Պահանջարկի աճ

Ազգային մրցունակության բարձրացման համար ստանդարտացման և համապատասխանության հավաստման գործընթացների կարևորության գիտակցման մակարդակի բարձրացումը նպաստել է ՄԱԻ ծառայությունների, ծրագրերի և փորձի պահանջարկի աճին: Վերջին տաս տարիների ընթացքում հանրապետությունում ընդունվել են մի քանի տասնյակ տեխնիկական կանոնակարգեր, որոնց մի մասն արդեն իսկ ներդաշնակեցվել է Եվրամիության և միջազգային պահանջներին: Իսկ այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներից ելնելով մշակվել և ընդունվել են հարյուրավոր ազգային ստանդարտներ, որոնք ներդաշնակ են միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին: Այդուհանդերձ, ելնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության և Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման միջազգային համաձայնագրի պահանջներից, ինչպես նաև Եվրամիության հետ Խորը և Համապարփակ Ազատ Առևտրի Համաձայնագրի ստորագրման գործընթացի պահանջներից, դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն ազգային ստանդարտները և տեխնիկական օրենսդրությունը միջազգային և եվրոպական ստանդարտներին ու պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: ՄԱԻ ձեռնամուխ է լինելու առաջիկա հինգ տարիներին այդ ոլորտում ապահովել առնվազն 80%-ոց ներդաշնակեցման մակարդակ: Բացի այդ, լիովին կվերանայվի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը և հին, կիրառության համար ոչ պիտանի ստանդարտները կփոխարինվեն նորերով: Միաժամանակ, այդ գործընթացը կնպաստի հանրապետության տնտեսության մեջ նոր գիտելիքի ու տեխնոլոգիայի ներդրմանը, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա տնտեսական աճի ու արտահանման ծավալների մեծացման համար:

2. Ռեսուրսներ

Ինչպես վերը նկարագրվեց, ՄԱԻ ծրագրերի և ծառայությունների պահանջարկն աճ է արձանագրում: Մակայն, ըստ ՄԱԻ գնահատման, ներկայումս մատչելի ռեսուրսների մակարդակի անփոփոխ մնալու դեպքում ընթացիկ և ապագա պետական գերակայություններին արդյունավետ կերպով օժանդակումը, ինչպես նաև ՄԱԻ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացումը զգալիորեն կբարդանա: Չնայած, որ վերջին 3 տարիներին ՄԱԻ շահութաբեր ընկերություն է եղել, սակայն ֆինանսավորման մեծագույն բաժինը ստացվել է համապատասխանության հավաստման աշխատանքներից: Սկսած 2008թ. վերջից, կապված ՀՀ



կառավարության կողմից պարտադիր սերտիֆիկացման ենթական ապրանքների և ծառայությունների ցանկի կրճատման հետ, ՍԱԻ եկամուտները նվազեցին մոտ 25%-ով: Իսկ 2009թ. ֆինանսական ճգնաժամը հանգեցրեց նաև պետական բյուջեից ֆինանսավորման կրճատմանը 2/3-ով: Միայն 2009թ. ընկերությունում իրականացված կառավարման և կառուցվածքային հանդուգն փոփոխությունների, նոր ծառայությունների ներդրման շնորհիվ հաջողվեց կարճաժամկետում որոշ չափով մեղմացնել ֆինանսավորման կրճատման ազդեցությունը: Սակայն երկարաժամկետում այդ իրավիճակը կարող է նպաստել ՍԱԻ ֆինանսավորման պլանում վնասի առաջացմանը: ՍԱԻ ձեռնամուխ է լինելու ընկերությունում հետագա կառուցվածքային և գործառնական փոփոխություններին, այն հաշվով, որպեսզի ընկերությունը մշտապես ապահովի շահութաբեր աշխատանք և հայթայթվեն նորանոր ռեսուրսներ:

3. Արտադրանքի անվտանգությունը

ՍԱԻ իր համապատասխանության հավաստման և լաբորատոր փորձաքննությունների ծառայությունների միջոցով մշտապես պայքարում է շուկա կեղծ և վտանգավոր արտադրանքներ ներմուծելու դեմ: **“ZUS A01”** մակնշումը արտադրանքի որակի լավագույն երաշխիքն է: Լինելով Հայաստանում ամենախոշոր սերտիֆիկացման մարմինը ՍԱԻ աշխատանքներ է տանում նաև աստիճանաբար կամավոր սերտիֆիկացման ընթացակարգերի մշակման ու կիրառման ուղղությամբ: Առաջիկա հինգ տարիներին ՍԱԻ մեծածավալ աշխատանքներ է տանելու իր լաբորատոր հզորությունների մեծացման, ժամանակակից սարքավորումների ներդրման ուղղությամբ, ինչի շնորհիվ կապահովվի կամավոր և պարտադիր սերտիֆիկացման աշխատանքների որակի բարձրացումը: Այս աշխատանքները մեծապես հիմնված են լինելու նաև շահագրգիռ կողմերի կարծիքները և առաջարկությունները հաշվի առնելու վրա: ՍԱԻ ձեռնամուխ է լինելու իր սերտիֆիկատների միջազգային ճանաչմանը: Այդ նպատակով հարկ կլինի ապահովել ՍԱԻ սերտիֆիկացման մարմնի և լաբորատորիաների հավաստարմագրումը որևէ միջազգայնորեն լայն ճանաչում ունեցող հավատարմագրման մարմնի կողմից:

Միաժամանակ, սերտիֆիկացման գործընթացի արդյունավետության բարձրացումը մեծապես կախված է գործող ազգային ստանդարտների շրջանակներից: Ուստի, ՍԱԻ զուգահեռ կատարելագործելու է ստանդարտացման դաշտը՝ նպաստելով սերտիֆիկացման գործընթացներում թերությունների վերացմանը:

Արտադրանքի անվտանգության ապահովման մյուս կարևորագույն գործոնն է տեղական արտադրողների շրջանում նորագույն տեխնոլոգիական պահանջներով ազգային ստանդարտների սերմանումը: ՍԱԻ խորհրդատվություն է մատուցում փոքր և միջին ձեռնարկատերերին իրենց արտադրությունների տեխնիկական պայմանների մշակման ուղղությամբ: ՍԱԻ աշխատանքներ է տանելու հատկապես ՓՄՁ շրջանում նոր միջազգային ստանդարտների կիրառման և ստանդարտացման աշխատանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Ի



վերջո, այդ աշխատանքները Հայկական շուկայում որակյալ և արտահանման կողմնորոշում ունեցող ապրանքների արտադրությունն ապահովելու նպատակ են հետապնդելու համար:

4. Իրազեկության բարձրացում, ուսուցում

ՄԱԻ կազմում գործում է Ուսումնական կենտրոնը, որը միակն է Հայաստանում մատուցում ուսուցման ծառայություններ համապատասխանության գնահատման ոլորտում: Ուսումնական կենտրոնի ծրագրերը մշտապես արդիականացվում և համապատասխանեցվում են միջազգային չափանիշներին ու տեղական օրենսդրության պահանջներին: Ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկության բարձրացումը, արժեքների մեկնաբանումը և քարոզումը մշտապես գտնվում են ՄԱԻ ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր տարի Ուսումնական կենտրոնը վերապատրաստում, որակավորում և ուսուցանում է հարյուրավոր մասնագետների: ՄԱԻ-ին հետամուտ է լինելու ուսուցման որակի շարունակական բարելավմանը և կենտրոնը նոր, որակյալ դասախոսներով համալրելուն: Առաջիկա հինգ տարիներին կենտրոնը հատկապես լայն քարոզչական աշխատանքներ է կատարելու ՓՄՁ շրջանում, նրանց ուսուցանելով ստանդարտացման հիմունքները, ստանդարտների կիրառման հնարավորությունները և եղանակները, ինչպես նաև ցուցադրելով ստանդարտացման և համապատասխանության գնահատման ընթացակարգերից ակնկալվող օգուտները: ՄԱԻ-ն կներդնի իր բոլոր ջանքերն ունկնդիրների շրջանակի անընդհատ ընդլայնման ուղղությամբ:

5. Ազգային համագործակցության ուժեղացում

ՄԱԻ-ի գործունեության հաջողության գլխավոր գրավականը ազգային շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունն է ստանդարտացման գործընթացներին: Այդուհանդերձ, ՄԱԻ չհանդիսանալով Ստանդարտացման ազգային մարմին, զրկված է ազգային շահագրգիռ մարմինների հետ անմիջական շփումներից, ինչը որոշակիորեն խոչընդոտում է աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Այս նպատակով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնված բարեփոխումներով նախատեսվում է ՄԱԻ-ին վերապահել նաև ազգային մարմնի լիազորությունները, ինչի շնորհիվ առավել կսերտանան ՄԱԻ և ազգային շահագրգիռ կողմերի միջև հարաբերությունները: ՄԱԻ կարևորում է նաև ազգային գործընկերների շրջանում ստանդարտացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը: ՄԱԻ-ին աշխատանքներ է տանելու ազգային գործընկերների մոտ իրենց ոլորտային ստանդարտների վերլուծության և մշակման ունակությունների ձևավորման ուղղությամբ:

6. Միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցությունը և տեխնիկական աշխատանքներին մասնակցությունը

ՄԱԻ-ը անդամակցում է ԻՍՕ, ՄԵՆ և Միջպետական ստանդարտացման ու չափազիտության խորհուրդ ստանդարտացման կազմակերպություններին: ՄԱԻ-ն անընդհատ աշխատանքներ է տանում Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացման ուղղությամբ:



Այսպես, միայն 2009թ. ընթացքում ԻՍՕ-ի վարկանիշային 105 անդամների ցուցակում ՍԱԻ-ն հաջողվել է բարելավել իր վարկանիշը, 91-րդ տեղից տեղափոխվելով 72-րդ տեղը: Առաջիկա հինգ տարիներին ՍԱԻ-ին ձգտելու է ընտրվել ԻՍՕ-ի խորհրդի անդամ և առավել ակտիվ դերակատարում ունենալ միջազգային ստանդարտացման աշխատանքներում: Միջազգային ստանդարտացման ասպարեզում ՍԱԻ ուժեղ դիրքը և ճանաչվածությունը թույլ են տալիս տեղական արտադրողներին համապատասխանեցնել իրենց արտադրանքը միջազգային ստանդարտներին և գերծ մնալ առևտրայի խոչընդոտներից՝ իրենց արտադրանքն արտահանելիս: Միաժամանակ, տեղական շուկայում սպառողները հնարավորություն են ստանում գնել միայն միջազգային չափանիշներին համապատասխանող ներմուծված արտադրանք:

ՍԱԻ-ին լրջագույն և մեծածավալ աշխատանքներ է տանելու տեղական արտադրողների շրջանում, որպեսզի խթանի նրանց մասնակցությունը միջազգային տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին: Տեղական արտադրողները պետք է սկսեն գիտակցել, որ միայն միջազգային ստանդարտացման աշխատանքներին մասնակցելով նրանք կարող են երաշխավորել սեփական գիտելիքի ու փորձի ներդրումը միջազգային շուկաներում և իրենց արտադրատեսակների մրցունակության ճանաչումը:

ՍԱԻ-ի միջազգային համագործակցությունը միտված է լինելու առավել ընդլայնմանը: Մասնավորապես, ՍԱԻ-ն սկսում է ԻԷԿ (Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտե) և ՄԵՆԵԼԵԿ (Եվրոպական էլեկտրատեխնիկական կոմիտե) կազմակերպություններին անդամակցումը, ինչի շնորհիվ հնարավորություն կստեղծվի Հայաստանի էներգետիկ համակարգի, նոր ատոմակայանի կառուցման, բաշխիչ ցանցերի արդիականացման և այլ նպատակներով ապահովել արդիական տեխնոլոգիաների և միջազգային ստանդարտների կիրառումը: ՍԱԻ-ն նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ է վարում ԷՏՄԻ (Միջազգային հեռահախորդակցության կոմիտե) կազմակերպությանն անդամակցելու նպատակահարմարության վերաբերյալ:

7. Մարդկային ռեսուրսներ

Առկա ծրագրերը և ծառայությունները հնարավոր չի լինի իրականացնել առանց բանիմաց և որակյալ տեխնիկական անձնակազմի: Միջազգային ասպարեզում անընդհատ ծագող նոր թեմաները և ոլորտները (օրինակ, բիովառելիք, նանոտեխնոլոգիաներ, կլիմայի փոփոխություն և այլն) պահանջում են պատրաստել նոր մասնագիտացված կադրեր: Այս նպատակով ՍԱԻ-ն անընդհատ ներդրումներ է կատարում իր անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ: ՍԱԻ մասնագետներն հաճախ ուղղարկվում են արտասահման տարբեր թրեյնինգների ու իրազեկման սեմինարների մասնակցելու համար: Այս գործընթացը մշտապես գտնվելու ՍԱԻ ուշադրության կենտրոնում և շարունակական բնույթ է կրելու:



2.2.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՄԱԻ ընկերության ռիսկերի կառավարման գնահատումը ներառում է ինչպես կորպորատիվ, այնպես էլ գործառնական ռիսկերը: Ընդհանուր առմամբ, ՄԱԻ ռիսկերի չեզոքացման ռազմավարությունները ներառված են նրա քաղաքականություններում, ծրագրերում, պլանավորման գործընթացներում և որակի կառավարման համակարգում: Ռիսկի կառավարման ՄԱԻ գործընթացները համապատասխանում են ԻՍՕ 31000 ռիսկի կառավարման ստանդարտին: Մույն զարգացման ծրագրի շրջանակներում առաջիկա հինգ տարում հնարավոր ռիսկերը և դրանց մեղմացմանն ուղղված միջոցառումները ներկայացված են ստորև բերվող աղյուսակում:

Ռիսկեր	Ռիսկի գնահատականը					Մեղմացման միջոցառում
	2010	2011	2012	2013	2014	
<p>Ֆինանսական ռեսուրսներ: ՄԱԻ-ն ներկայումս ֆինանսական դժվարություններ ունի՝ կապված առկա պահանջների և մատչելի ֆինանսավորման աղբյուրների հետ: Այս ռիսկը կարող է հանգեցնել ծրագրով նախատեսված ոչ բոլոր միջոցառումների ժամանակին իրականացմանը:</p>	●	●	●	✱	✱	Վերանայել ծախսատար և անեկամտաբեր գործառույթները, բացահայտել ծախսերի կրճատման հնարավորությունները
<p>Համապատասխանության հավաստում, փորձաքննություն:</p> <p>Այս ծրագրի համար ներկայիս ռիսկը կապված է մրցակցային դիրքը, շուկայի մասնաբաժինը կորցնելու, մասնավոր ընկերությունների կողմից անարդար մրցակցություն իրականացնելու և պարտադիր սերտիֆիկացումից հրաժարվելու կառավարության քաղաքականության հետ:</p>	✱	✱	✱	◊	◊	Բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը, ներդրումներ կատարել լաբորատորիաների հզորացման ու արդիականացման, ինչպես նաև փորձագետների շարունակական վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ:
<p>Միջազգային տեխնիկական աշխատանքներին մասնակցություն:</p> <p>Միջազգային տեխնիկական հանձնաժողովներում հայ մասնագետների կամավոր մասնակցության հնարավորությունների, ցանկության և ունակության բացակայությունը վտանգում է Հայաստանի և ՄԱԻ հեղինակությունը միջազգային ստանդարտացման ոլորտում:</p>	●	●	●	●	●	Մշակել ազգային ռազմավարություն
<p>Մարդկային ռեսուրսներ: Որակյալ կադրերի պակասը, առկա կադրերի վերապատրաստման սահմանափակ</p>	✱	●	●	✱	✱	Մշակել և ներդնել կադրերի պատրաստման երկարաժամկետ ծրագիր՝ ըստ անհրաժեշտ



Ռիսկեր	Ռիսկի գնահատականը					Մեղմացման միջոցառում
	2010	2011	2012	2013	2014	
հնարավորությունները վտանգում են աշխատանքների կատարման որակը:						ուղղվածությունների:
Ընկերության հեղինակությունը: ՄԱԻ վայելում է մեծ հեղինակություն գործարարների և ազգային շահագրգիռ մարմինների շրջանում: Այդուհանդերձ, նախատեսվող ինստիտուցիոնալ բարեփոխումները, ընկերության վերակազմակերպումը, կադրերի որակավորման ոչ բավարար մակարդակը կարող են մոտ ապագայում մեծ վնաս հասցնել ընկերության հեղինակությանը:	◊	◊	*	*	◊	Մշտապես հաշվի առնել ընկերության հեղինակության վտանգման հնարավորությունը և ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ:
Իրավական: Հնարավոր օրենսդրական փոփոխությունները, ՄԱԻ կառուցվածքը, նպատակները, առաքելությունը և գործառույթները օրենքով չնախատեսելը կարող են ռիսկային լինել Հայաստանում ստանդարտացման գործընթացի զարգացման համար:	◊	●	●	●	*	Ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտներում օրենսդրական ցանկացած փոփոխություն պետք է լավ կշռադատված լինի ու հիմնված լինի խորը հետազոտությունների ու գնահատումների վրա:
Կորպորատիվ կառավարում: ՄԱԻ կառավարումը պետք է իրականացվի կայուն հիմունքներով ու հստակ սահմանված ընթացակարգերով: Ներկայիս կառավարումը վտանգված է տնօրենների խորհրդի բացակայության պատճառով:	●	●	*	◊	◊	Ապահովել տնօրենների խորհրդի ստեղծումը, անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կատարել օրենսդրական փոփոխություններ: Ապահովել, որ տնօրենների խորհուրդը լինի բարձրաստիճան ներկայացուցչական, դրանում ընդգրկելով ներկայացուցիչներ բոլոր շահագրգիռ կողմերից, այդ թվում՝ ՀՀ նախագահի աշխատակազմից, ՀՀ ազգային ժողովից, ՀՀ կառավարությունից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, խոշոր գործարարներից, ՓՄՁ-ներից, ՀԿ-ներից և այլն:

- - բարձր ռիսկային
- * - միջին ռիսկային
- ◊ - ցածր ռիսկային



2.2.2 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Մույն զարգացման ծրագրի շրջանակներում առաջիկա հինգ տարում կազմակերպության գործունեության կազմակերպման համար նախատեսվում է հետևյալ ֆինանսական միջոցների ներգրավում.

Ցուցանիշի անվանումը	Տարիներ				
	2010	2011	2012	2013	2014
<i>Արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ, այդ թվում՝</i>	<i>367900</i>	<i>390200</i>	<i>411000</i>	<i>414000</i>	<i>418000</i>
Համապատասխանության հավաստման ծառայություններ	125000	128700	130000	132000	133000
Պարենային և ոչ պարենային ապրանքների փորձաքննություն	111500	120000	130000	133000	133000
Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում	32000	31000	35000	35000	35000
Ծառայությունների սերտիֆիկացում	26000	27000	28000	28000	29000
Ստանդարտացում	10000	15000	16000	16000	17000
Այլ եկամուտներ	63400	68500	72000	70000	71000
Ծախսեր	354180	371100	386900	388000	390000
Շահույթ /վնաս/	15520	19100	24100	26000	28000
Շահութահարկ	3500	3900	4800	5200	5600
Զուտ շահույթ /վնաս/	12020	15200	19300	20800	22400
Շահաբաժին	2400	3100	3870	4200	4500

2.3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Մույն զարգացման ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ “Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲ ընկերությունը կապահովի իր գործունեությունից ստացվող զուտ շահույթի աճ, կրթարձրացնի Հայաստանի միջազգային հեղինակությունը և կնպաստի սպառողների շահերի պաշտպանության մակարդակի, շուկայում ապրանքների ու ծառայությունների որակի աճին: